ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ բանաստեղծ, ֆրանսիական դիմադրության շարժման մարտիկ Միսաք Մանուշյանի կիսանդրու տեղադրմանը Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակում՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մանուշյանը ծնվել է 1906 թվականին, Օսմանյան կայսրության Ադիյաման քաղաքում եւ վերապրել Հայող ցեղասպանությունը: Ծնողներն սպանվել են կոտորածների ընթացքում, սակայն ինքը հաջողացրել է ազատվել եւ եղբոր հետ միասին 1925 թվականին հասել Ֆրանսիա: Լինելով համոզված կոմունիստ՝ ներգրավվել է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության շարքերում՝ զուգահեռաբար տպագրելով նաեւ հայկական «Զանգու» թերթը:

Մանուշյանը պոետ էր, հրապարակախոս, Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության անդամ: Բանվոր դասակարգի վառ ներկայացուցիչ էր ու աշխատում էր «Citroën» գործարանում՝ որպես խառատային հաստոցի օպերատոր: 1930-ականներին սկսեց գրական գործունեություն ծավալել, հիմնադրեց և խմբագրեց «Զանգու» հակաֆաշիստական, հակադաշնակցական, հակաիմպերիալիստական և խորհրդային գաղափարներ քարոզող շաբաթաթերթը: 1934-ին ծանոթացավ և ամուսնացավ Մելինե Մանուշյանի հետ: Միսաքը մտերիմ էր Լուիզա և Արփիար Ասլանյանների հետ, Լուիզայի հետ զբաղվում էր դեպի Խորհրդային Հայաստան հայրենադարձության կոմիտեին աջակցելու աշխատանքներով:

Միսաք Մանուշյանը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիական հականացիստական Դիմադրության առաջնորդներից է: Նա ղեկավարում էր FTP-MOI (Ներգաղթյալների աշխատավորական ուժ) խումբը՝ բաղկացած հունգարացի, ռումինացի, լեհ, իսպանացի և հրեա ներգաղթյալներից:

Մանուշյանի ջոկատը հանդուգն ու խիզախ գործողություններ է իրականացրել նացիստական զավթիչների դեմ: Ջոկատի գործողությունները վարկաբեկելու համար նացիստները նրանց անունները ներառել են հանրահայտ «l' affiche Rouge» (Կարմիր պլակատ) քարոզչական ցուցակում, որը ցույց էր տալիս, որ գերմանացիների դեմ պայքարում են ոչ ֆրանսիացիները:

1943 թվականի նոյեմբերի 16-ին Մանուշյանի խումբը ձերբակալվել է և մի քանի ամիս տևած հարցաքննություններից և տանջանքների ենթարկվելուց հետո 1944 թվականի փետրվարի 21-ին Միսաք Մանուշյանն իր դիմադրության խմբի 23 անդամների հետ մահապատժի է ենթարկվել Փարիզի մոտ գտնվող Ֆորտ Մոն Վալերիեն ամրոցում:
Մանուշյանին հետմահու շնորհվել է Պատվո լեգեոնի շքանշան: Նրա և իր խմբի անունով անվանվել են փողոցներ և հրապարակներ Փարիզում, Մարսելում, Վալանսեում և Երևանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ